

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

02.07. 2019թ.

Արձանագրություն թիվ 12

1. ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեությունը խրախուսող հավելավճարների հաշվարկման և վճարման նոր համակարգի ներդրման վերաբերյալ.

1.1. Ընդունել ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական գործունեություն իրականացնելու համար լրավճարների հաշվարկման և վճարման նոր կարգը և երաշխավորել գիտական խորհրդի հաստատմանը.

Հ/Հ	Գիտական գործունեության գնահատման չափանիշը	Գումարը՝ հազ. դր
1	ՀՀ ԲՈԿ-ի կողմից ճանաչված գիտական պարբերականներում և գիտական աշխատանքների ժողովածուներում տպագրված հոդվածներ	20.0
2	Հոդվածի տպագրում ազդեցության գործակցով գիտակ. հանդեսներ. (Web of Science, Scopus և այլն)	45.0
3	Հոդվածի տպագրում արտասահմանյան բուհի կամ գիտահետազոտ. ինստիտուտի ներկայացուցչի հետ համահեղինակությամբ ¹	12.0
4	Հայաստանում անցկացված գիտաժող. նյութերի ժողովածուներում տպագրված հոդվածներ	12.0
5	Հայաստանում անցկացված միջազգային գիտաժող. նյութերի ժողոված. տպագ. թեզիսներ/պատաստներ	10.0
6	Արտասահմանում կազմակերպված գիտաժ. նյութերի ժողովածուն. տպագրված հոդվածներ	25.0
7	Արտասահմ. կազմակերպված գիտաժ. նյութերի ժողոված. տպագր. թեզիսներ/պատաստներ	15.0
8	Մենագրություններ (2 մասնագիտական գրախոսի և համապատ. ստորաբաժ. գիտ. խորհրդի երաշխավորության առկայությամբ)	60.0
9	Դասագրքեր և ուսումնական. ձեռնարկ. (2 մասնագիտ. գրախոսի և համապատ. ստորաբաժանման գիտխորհրդի երաշխավորութ. առկայությ.)	60.0
10	ՀՀ արտոնագրեր. մեկ միավորի համար	30.0
11	Միջազգային արտոնագրեր. մեկ միավորի համար	100.0
12	Միջազգային գիտահետազ. դրամաշնորհի շահում	100.0
13	Տեղական գիտահետազոտ. դրամաշնորհի շահում	50.0

¹Աղյուսակի 3-րդ կետով սահմանված գումարը վճարվում է, եթե տպագրված հոդվածը համապատասխանում է Աղյուսակի 1-ին և 2-րդ կետերով սահմանված աշխատանքների նկարագրությանը: Լրավճար վճարվում է նաև հոդվածի համար սույն կարգի աղյուսակի համապատասխան կետով սահմանված չափով:

1.2. Հանձնարարել տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին Որակի գնահատման և ապահովման կենտրոնի հետ համատեղ clouds համակարգում ստեղծել տվյալների բազաներ՝ ըստ ամբիոններում իրականացվող աշխատանքների:

1.3. Հանձնարարել գիտության գծով պրոռեկտոր Հ. Ծպնեցյանին և տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին ՀԱԱՀ-ը գրանցել researchgate.net հարթակում և ստեղծել համալսարանի էջը:

1.4. Հանձնարարել գիտության գծով պրոռեկտոր Հ. Ծպնեցյանին և տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին խրախուսել և հետևել ՀԱԱՀ-ի մեծաքանակ հրապարակումներ ունեցող աշխատակիցների գրանցումը researchgate.net կամ ցանկացած Scholar հարթակներում՝ աշխատակիցների տրամադրելով anau.am դոմեյնով էլ. հասցեներ:

2. 2018-2019 թթ. ուս. տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ընթացիկ վիճակի վերաբերյալ.

Հանձնարարել դեկաններին լինեն հետևողական, ուսանողների շրջանում իրականացնել ուսման վարձավճարների հավաքագրման վերաբերյալ բացատրական աշխատանքներ և պատշաճ կերպով ամփոփել երկրորդ կիսամյակի քննաշրջանը:

3. 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում մարտական գործողություններին մասնակցած, մարտական հերթապահություն իրականացրած ուսանողների ուսման վարձավճարների զեղչերի վերաբերյալ.

3.1. 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմին մասնակցած հեռակա ուսուցման դեպարտամենտի 2018-2019 թթ. ուսումնական տարվա վճարովի համակարգի ներքո-հիշյալ ուսանողների համար սահմանել տարեկան ուսման վարձի զեղչ՝ 50 %-ի չափով.

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Մասնագիտ., կուրսը	Տարեկ. ուսմ. վարձը (հազ. դրամ)	Զեղչը (հազ. դրամ)
1	Ռուսյան Մկրտիչ Արթուրի	Անասնաբուծ. - 2	175,0	87,5 (II կիսամ.)
2	Բրուտյան Մամիկոն Աշոտի	Գյուղ. հումք - 2	340,0	170,0
3	Խաչատրյան Զավեն Սպարտակի	Մսի տեխն. - 3	340,0	170,0

3.2. 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում մարտական գործողություններ իրականացրած հեռակա ուսուցման դեպարտամենտի 2018-2019 թթ. ուսումնական տարվա վճարովի համակարգի ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել տարեկան ուսման վարձի զեղչ՝ 30 %-ի չափով.

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Մասնագիտությունը, կուրսը	Տարեկ. ուսմ. վարձը (հազ. դրամ)	Զեղչը (հազ. դրամ)
1	Ավետիսյան Վանիկ Հովհաննեսի	Անասնաբուծ. - 3	300,0	90,0
2	Զարգարյան Նարեկ Վարդգեսի	Անասնաբուծ. - 2	350,0	105,0
3	Հովհաննիսյան Արման Կարենի	Պահածո. տեխն. - 3	340,0	102,0
4	Մկրտչյան Ֆելիքս Աշոտի	Պահածո. տեխն. - 3	280,0	84,0

4. «Հոդաշինարարություն և հոդային կադաստր» մասնագիտության 2018-2019 թթ. ուսումնական տարվա 3-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող Ռուբեն Դերենիկի Գրիգորյանի ուսման վարձի մասնակի փոխհատուցման վերաբերյալ.

Բարձր առաջադիմության և մարտական հերթապահություն իրականացնելու համար ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Հոդաշինարարություն և հոդային կադաստր» մասնագիտության 2018-2019 թթ. ուսումնական տարվա 3-րդ կուրսի վճարովի համակարգի ուսանող Ռուբեն Դերենիկի Գրիգորյանի ուսման վարձավճարը համալսարանի միջոցների հաշվին մասնակի փոխհատուցել 30 %-ով (60,0 հազ. դրամ):

5. Համալսարանի տարբեր ֆակուլտետներում Moodle և eBuh համակարգերի ներդրման վիճակի վերաբերյալ.

5.1. Հանձնարարել դեկաններին լինել հետևողական և հետևել eBuh համակարգի աշխատանքների իրականացմանն ըստ սահմանված ժամանակացույցի:

5.2. Հանձնարարել ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ Դ. Հայրապետյանին վերահսկել քոլեջում և բակալավրիատում դասավանդվող առարկաների Moodle համակարգ ներբեռնվող նյութերի մակարդակների տարբերությունը:

5.3. Հանձնարարել ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ Դ. Հայրապետյանին և տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին ՀԱԱՀ հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի, Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի, Շիրակի պետական գյուղատնտեսական քոլեջի և Սիսիանի մասնաճյուղի համար գործարկել dasar.am ծրագիրը:

6. Արտադրական պրակտիկաների պատշաճ կազմակերպման անհրաժեշտության վերաբերյալ.

Հանձնարարել դեկաններին, մասնագիտական ամբիոնների վարիչներին լինել հետևողական, պատշաճ և նպատակային կերպով կազմակերպել արտադրական պրակտիկաները:

7. Շեն բարեգործական կազմակերպության կողմից ՀԱԱՀ-ին նվիրաբերված Կոտայքի մարզի Ակունք համայնքում գործող օրգանական գյուղատնտեսության ուսումնափորձնական տնտեսության հնարավորությունների պատշաճ օգտագործման, ինչպես նաև համալսարանի կողմից ՀՀ կառավարության միջոցների հաշվին ֆինանսավորվող մի քանի ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ.

7.1. Հանձնարարել ագրոնոմիական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա. Տեր-Գրիգորյանին այցելել Կոտայքի մարզի Ակունք համայնքում գործող օրգանական գյուղատնտեսության ուսումնափորձնական տնտեսություն, հանդիպել օրգանական գյուղատնտեսության ծրագրի աշխատակիցների հետ, ծանոթանալ իրականացվող

աշխատանքներին և գնահատել դրանցում ՀԱԱՀ դասախոսական անձնակազմի և ուսանողների ներգրավման հնարավորությունները:

7.2. Հանձնարարել անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա. Աբովյանին կազմել «Խելացի անասնա-
շենքեր» ծրագրի դասընթացներին մասնակցած ֆերմերների տվյալների բազա:

7.3. Հանձնարարել Կարիերայի զարգացման և շարունակական կրթության բաժնի վարիչ Լ. Վարդանյանին ներկայացնել «Խելացի անասնաշենքեր» ծրագրի վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

8. Նոր ուսումնական տարում համալսարանում թեստավորման համակարգի գործարկման, կուրսային աշխատանքների քանակի կրճատման, արտադրական պրակտիկաների օրագրերի չեղարկման վերաբերյալ:

8.1. Հանձնարարել ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ Դ. Հայրապետյանին և տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին վերահսկել թեստավորման համակարգի ներդրման ընթացքը համալսարանում:

8.2. ՀԱԱՀ բակալավրատի բոլոր մասնագիտությունների առաջին և երկրորդ կուրսերում առարկայական ծրագրերից հանել կուրսային աշխատանքները, իսկ երրորդ և չորրորդ կուրսերում հանձնարարվող կուրսային աշխատանքների առավելագույն քանակը սահմանել 4:

8.3. Չեղարկել ուսանողների կողմից արտադրական պրակտիկաների օրագրերի վարումը:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Կ. ՈՒՌՈՒՏՅԱՆ